ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանում հունիսի 19-ին տեղի ունեցավ հիշատակի ոգեկոչման արարողություն՝ նվիրված «ԱԿՕՍ» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքին: Համալսարանի ռեկտոր Գ. Խաչատրյանի առաջարկությամբ և գիտխորհրդի որոշմամբ բանասիրական ֆակուլտետի նորաբաց լրագրության (ժուռնալիստիկա) բաժնի լսարանն անվանվեց Հրանտ Դինքի անվամբ:

Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի հրավերով հանդիսավոր այս արարողությանը եկել էին Հրանտ Դինքի հարազատները՝ այրին՝ տիկին Ռաքելը, և Հրանտի եղբայրը՝ Երվանդը:

Բացման խոսքով հանդես եկավ տիար Գ. Խաչատրյանը՝ կարևորելով Հրանտ Դինքի ազգային-հասարակական գործունեությունը, և իր ուրախությունը հայտնեց լրագրության բաժնի լսարանը Հրանտ Դինքի անվամբ կոչելու համար:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգելով նահատակ լրագրողի հիշատակը՝ Սեպուհ Սրբազանի հնչեցրած «Հոգւոցն հանգուցելոց» աղոթքից հետո մասնակցեցին ի հիշատակ Հրանտ Դինքի պատրաստված հուշաքարի բացման արարողությանը:

Թեմական առաջնորդը, ողջունելով ներկաներին, ներկայացրեց մալաթիացի իր հայրենակցի կենսագրությունը և բազմարդյուն ու ազգաշահ հասարակական գործունեությունը, ապա մխիթարության խոսքեր ուղղեց տիկին Ռաքելին, Հրանտի եղբորը և ներկաներին՝ ի մասնավորի ասելով. «Թուրքիայում 90 տարի լուռ մնացած հայ համայնքը, իր մեջ ցավն ու վիշտը անթեղած, վերջապես Հրանտի շուրթերով իր ձայնը բարձրացրեց հանուն արդարության և ազատ խոսքի, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության: Խոր վշտով ևս մեկ անգամ խոնարհվում ենք Հրանտի հիշատակի առջև և ցավակցում տիկին Ռաքելին, եղբորը՝ Երվանդին, և բոլոր հարազատներին»:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաև գրականության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մելս Սանթոյանը, Հայաստանում «Ակօս» թերթի թղթակից Տիրան Լոքմագյոզյանը, լրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանողները, ովքեր և իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին տիկին Ռաքելին: Նրանց խնդրանքին ի պատասխան՝ տիկին Ռաքելը խոստացավ լրագրության լսարանին նվիրել Հրանտին վերաբերվող գրականություն և նրա անձնական իրերից:

Համալսարանի կողմից տիկին Ռաքելին Գ. Խաչատրյանը որպես հիշատակ նվիրեց Հովհ. Թումանյանի շքեղակազմ ընտրանին և մի քանի այլ հրատարակություններ:

Տիկին Ռաքել Դինքը հուզմունքով և երախտագիտությամբ իր շնորհակալությունը հայտնեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանին և բուհի ղեկավարությանը՝ նմանօրինակ գնահատանքի և ուշադրության համար: